ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյանի նախագահությամբ կայացած Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի ընդլայնված արտագնա նիստի /անցկացված Վանաձորի «Օրրան» ՀԿ-ի Գրիգորյան կենտրոնում/

16.07.2024թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, տեղական ինքնակառավարման մարմինների և հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Ընդլայնված նիստի Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ կառավարության 08.06.2023թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշման պահանջների վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմի կատարմանը վերապահված կետերի ներկայացում և անելիքների քննարկում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան, «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ, ՀՀ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական Սուրեն Մաղաքյան, ՀՀ կառավարության 08.06.2023թ. N 943-Լ որոշմամբ հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի ղեկավար Վանիկ Այվազյան/

2. ՀՀ Լոռու մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական բարեկարգման աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների համար քաղաքաշինական նորմերի պահպանման մասին:

/Զեկ.՝ «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ, ՀՀ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական Սուրեն Մաղաքյան/

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագրի մասին հանրային իրազեկման վերաբերյալ անցկացված հարցումների վերաբերյալ քննարկում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան, Համայնքների ներկայացուցիչներ/

4. Հաշմանդամություն ունեցող անձին անձնական օգնականի ծառայություն տրամադրելու հետ կապված հարցերի մասին: ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 8-ի «ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 11-ի N 1264-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 30-Ն որոշման ներկայացում, ներկա իրավիճակի և կատարողական ընթացքի մասին տեղեկատվության տրամադրում:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի անդամ, «Անկախ կյանքի ռեսուրս կենտրոն»-ի շահերի պաշտպանության համակարգող Վահան Սարգսյան/

5. Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգը, դրա սկզբունքային տարբերությունները նախկին՝ բժշկասոցիալական փորձաքննության համակարգից, ֆունկցիոնալության գնահատման ընթացակարգը:

/Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ՝ Աննա Հակոբյան/

6. ՀՀ Լոռու մարզում բնակվող 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց՝ Ջուդի նախաձեռնության շրջանակներում հայտարարվող դրամաշնորհին մասնակցության մասին /տեղական, տարածաշրջանային կամ ազգային մակարդակներ/:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան, «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ, ՀՀ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական Սուրեն Մաղաքյան/

7. Տեղեկատվության հաղորդում «Բոչիա խաղը հանուն շահերի պաշտպանության և ներառականության» ծրագրի արդյունքների մասին:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան/

8. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյանին՝

ա/ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի, «Անկախ կյանքի ռեսուրս կենտրոն»-ի շահերի պաշտպանության խմբի ներկայացուցիչների հետ այցելել Վանաձորի Աղայան փողոց՝ տեղում ծանոթանալ բարեկարգված տարածքներում մատչելիության խնդրին:

բ/ Հետևողական լինել ՀՀ Լոռու մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական բարեկարգման աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների համար քաղաքաշինական չափորոշիչների պահպանմանը:

2. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կայք-էջում տեղադրելու համար:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի անդամ Աննա Գասպարյանին՝

ա/ Ապահովել Հանձնաժողովի նիստի հրապարակայնությունը:

բ/ Ապահովել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատրաստված թեմատիկ տեսահոլովակների հանրային իրազեկումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Արձ.՝ Վ.Ջաղինյան /0322 2-33-99/